ԴԱԴԻԿ ՇԱԼՋՅԱՆ

ՄԵՐՁԱՎՈՐ ԵՎ ՄԻՋԻՆ ԱՐԵՎԵԼՔԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ԻՐԱՆԱ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԴՐԱՆՔ ԶԵՎԱՎՈՐՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՈՐԾՈՆՆԵՐԻ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ (1990—1993 ԹԹ.)

Իրանա-թուրքական հարաբերությունները իրենց զարգացման ընթացքում աչքի են ընկել հակասական բնույթով և արտաքուստ բարիդրացիության ժամանակաշրջանները հաճախ փոխվում էին իրար նկատմամբ բացահայտ թշնամանքի ժամանակաշրջաններով։

Իրանի և Թուրքիայի հարաբերություններում լարվածության աստիճանը պայմանավորված էր լինում նախ այդ երկուսի ներքին քաղաքատնտեսական կացությամբ և ապա Մերձավոր և Միջին արևելքի տարածաշրջանում տիրող իրավիճակով, աշխարհի այդ մասում ազդեցության ոլորտների համար բախվող ուժերի հարաբերակցությամբ և դրա արդյունքում՝ ազդեցության ոլորտների ակնկալվող հերթական վերաբաժանումով։

Իրանա-թուրքական հարաբերություններում հերթական լարվածության շրջանը սկիզբ առավ և ժամանակին ու նոր պայմաններին համապատասխանող առանձնահատկություններ ստացավ նախ Ծոցի պատերազմից և ապա միջազգային հարաբերությունների համար մեկ այլ կարևոր իրադարձությունից, այն է՝ ԽՍՀՄ-ի լուծարումից հետո։

Ահա այս կարևորագույն իրադարձությունների ներքո, որոնք մի քանի տարով կանխորոշելու էին միջազգային հարաբերությունների զարգացման ընթացքը ողջ աշխարհում, ձևավորվում էին նաև իրանա-թուրքական հարաբերությունները։

Բացի նշված գործոններից, միմյանց նկատմամբ երկու երկրների դիրքորոշումը ձևավորող համաշխարհային հնչեղություն ունեցող գործոններից էին Իրանի և Թուրքիայի դիրքորոշումը ԱՄՆ-ի և Իսրայելի նկատմամբ, Թուրքիայի՝ ՆԱՏՕ-ին անդամակցելը և Իրանի՝ ոչ այդքան ցցուն հարաբերությունները Ռուսաստանի հետ[1], որոնք, սակայն, ունեին իրենց ծանրակշիռ ազդեցություններ համաշխարհային և տարածաշրջանային քաղաքականության վրա, և որոնք, Իրանի տեսակետից, կոչված էին ծառայելու որպես հակակշիռ Թուրք-ամերիկյան համահունչ տարածաշրջանային քաղաքականությանը, որը, վերջիններիս մտադրությամբ, էապես պետք է ուղղված լիներ Իրանի աճող ազդեցության սահմանափակմանը և մուսուլմանական աշխարհում առաջացող տարբեր ուժգնության ծայրահեղական կրոնական ալիքների խաղաղեցմանը։

Իրանա-Թուրքական հարաբերությունների սկզբունքային դրդապատճառները հնարավորին չափ ամբողջական բնութագրելու համար անհրաժեշտ է համառոտ անդրադառնալ նաև նշված ժամանակահատվածում ռուս-իրանական հարաբերություններին, որոնց ձևավորումը էապես պայմանավորված էր տարածաշրջանում ԱՄՆ-ի և Թուրքիայի քաղաքական և տնտեսական շահերի ընդհանրությունով։

Ներկայիս ռուս-իրանական հարաբերությունները սկսեցին ձևավորվել ԽՍՀՄ-ի ԱԳ նախարար Շևարդնաձեի Թեհրան (1989 թ. փետրվար) և Իրանի նախագահ Ռաֆսանջանիի Մոսկվա (1989 թ. հունիս) կատարած այցելություններից հետո։

Այդ շրջանից, սկզբում խորհրդա-իրանական, իսկ այնուհետև՝ ԽՍՀՄ-ի լուծարումից հետո, ռուս-իրանական հարաբերություններում սկսեցին դրսևորվել ռազմաքաղաքական և տնտեսական համագործակցության միտումներ։

Այս միտումներին ավելի արագ ընթացք հաղորդեցին Պարսից ծոցի պատերազմը և ԽՍՀՄ-ի լուծարումը, որը նպաստեց տարածաշրջանում ԱՄՆ-ի ռազմաքաղաքական առկայության ընդլայնմանը, ինչը բացասաբար ընդունվեց Իրանի կողմից։

Կապերի արագ զարգացմանը նպաստեց նաև Ռուսաստանի հայտարարությունն այն մասին, որ նա երաշխավորում է ԽՍՀՄ-ի և Իրանի միջև կնքված բոլոր պայմանագրերի իրագործումը։

Իրանի ԱԳ նախարարի տեղակալ Ալի Մուհամմեդ Բեշարաթիի բնութագրմամբ, հարաբերությունները Ռուսաստանի հետ մնում են Իրանի արտաքին քաղաքականության ստրատեգիայի հիմքում։

Նշված հանգամանքները Իրանի տեսանկյունից բավարար հիմք հանդիսացան Ռուսաստանի հետ հարաբերությունների սերտացման խնդրում համապատասխան քաղաքականության մշակման համար։

Նախքան ԽՍՀՄ-ի լուծարումը խորհրդա-իրանական հարաբերություններում արդեն նկատելի էր որոշակի սերտացում, ուր հիմնական շեշտը դրվում էր հատկապես ռազմական ոլորտում հարաբերությունների զարգացմանը[3]։

ԽՍՀՄ-ի լուծարումով, Ռուսաստանը ժառանգեց այդ պետական կառույցի քաղաքական և ռազմական դերը ե, իրականացնելով խոշորածավալ ներպետական փոփոխություններ, փորձեց պահպանել իր դիրքերը միջազգային ասպարեզում։

Այս տեսանկյունից հասկանալի էր դառնում Իրանի և Ռուսաստանի փոխադարձ շահագրգռությունը կայուն և արդյունավետ հարաբերություններ հաստատելու գործում, քանի որ մի կողմից Իրանին (մեկուսացման պայմաններում) իր քաղաքատնտեսական դերը բարձրացնելու և ԱՄՆ-ի ուղղակի միջամտությամբ Թուրքիայի ազդեցության տարածմանն ուղղված քաղաքականությանը դիմակայելու համար անհրաժեշտ էր խոշոր պետության ծանրակշիռ աջակցությունը, լինի դա քաղաքական կամ ռազմական ոլորտում։ Մյուս կողմից Ռուսաստանը ես՝ իր տարածաշրջանային քաղաքականությունը ավելի արդյունավետ դարձնելու համար, շահագրգռված էր Իրանի հետ իր հարաբերությունների ամրապնդման խնդրում՝ նոր պայմաններում ձևավորվող ռուս-ամերիկյան հարաբերություններում ազդեցիկ լծակ ձեռք բերելու, ինչպես նաև սպառազինությունների շուկան շկորցնելու նպատակով։

Այս հանգամանքներով էին պայմանավորված Ռուսաստանին ուղղված Իրանի հետևողական կոչերը՝ ակտիվորեն միջամտել Աֆղանստանի[4], Պաղեստինի, Ղարաբաղի և այլ տարածաշրջանային կարևորագույն խնդիրների լուծմանը։

Սկզբնական շրջանում ընտրելով համագործակցության ռազմական ոլորտը, այդ երկու երկրները բավականին զգուշավոր քայլերի շնորհիվ փորձում էին պարզել երկու կողմերի համագործակ-

դելու պատրաստակամության աստիճանը և դրա՝ ռազմաքաղաքական լուրջ հարաբերությունների վերաճելու հնարավորությունները։

Այժմ կարելի է ասել, որ ռազմական համագործակցությունը խթանեց հետագա ռուս-իրանական լայնածավալ հարաբերությունների զարգացմանը, որոնք ներկա պահին զգալիորեն պայմանավորում են միջպետական հարաբերությունները և նրանց զարգացման միտումները ինչպես տարածաշրջանային, այնպես էլ միջազգային ասպարեզներում։

* * *

Իրանա-թուրքական հարաբերությունների համար չափազանց կարևոր են նաև Իրանի կողմից տվյալ ժամանակահատվածում մի շարք առաջատար երկրների՝ մասնավորապես Գերմանիայի, Ֆրանսիայի, Իտալիայի, Իսպանիայի և այլն, ինչպես նաև ԱՄՆ-ի և Ճապոնիայի հետ հարաբերությունների վերանայման և վերագնահատման ծրագրերը[5]։

Այդ ծրագրերի իրականացումը երկրի տնտեսությունը վերականգնելու և իշխանությունը հոգևորականների ձեռքում պահելու կարևորագույն երաշխիքներից էր։ Այդ նպատակով Իրանը ստիպված էր էապես հրաժարվել առճակատման քաղաքականությունից և ընտրել Արևմուտքի հետ հաշտվելու ճանապարհը։

Այդ են վկայում Արևմուտքի կողմից որպես ահաբեկչական կազմակերպություններ որակվող զանազան իսլամական կազմակերպություններին Իրանի կողմից ցուցաբերվող աջակցության կտրուկ սահմանափակումը, ինչպես նաև արևմտյան պատանդների ազատման գործում Իրանի ակտիվ միջնորդությունը[6]։

Իրանի այս նախաձեռնությունը դրական արձագանք գտավ մի շարք եվրոպական պետություններում, ինչպես նաև Ճապոնիայում և սկզբնական շրջանում, որոշ չափով, նաև ԱՄՆ-ում։

Ընդունելով Իրանի հանգուցային դերը տարածաշրջանային հարաբերությունների համակարգում՝ Եվրոպական Ընկերակցության երկրները լրջորեն մտահոգված էին Իրանի նկատմամբ կոորդինացված քաղաքականություն իրականացնելու անհրաժեշտությամբ։ Դա իր արտահայտությունը գտավ այդ շրջանում եվրոպական մի շարք պետությունների (Իսպանիա, Իռլանդիա, Հու-

նաստան, Պորտուգալիա, Գերմանիա, Ֆրանսիա և այլն) պատվիրակությունների Իրան կատարած այցելություններում, որոնց ժամանակ այդ երկրների բարձրաստիճան պաշտոնյաները շեշտում էին Իրանի ու ԵՀ երկրների միջև սերտ կապեր հաստատելու անհրաժեշտությունը։ Անկասկած, եվրոպական զարգացած պետությունների հետ Իրանի համագործակցությունը պայմանավորված էր երկու կողմերի համար փոխշահավետ հեռանկարներով։

Հատկապես արագ էին վերականգնվում հարաբերությունները Գերմանիայի և Ֆրանսիայի հետ։

Գերմանիայի հետ կապերը զուգահեռաբար զարգանում էին թե՛ քաղաքականության և թե՛ տնտեսության ու առևտրի ընդգավառներում[7]։ Հաճախակի բնույթ էին կրում պաշտոնական շփումները, իսկ Գերմանիայի խոշոր ֆինանսական կազմակերպությունները և արդյունաբերական ընկերությունները Իրանում ակտիվ գործունեություն էին ծավալում։ Հարկ է նշել, որ իրանա-գերմանական հարաբերությունների բարելավումն ընթանում էր Գերմանիայի և Թուրքիայի հարաբերությունների համեմատական վատթարացման ենթատեքստում[8], ինչը որոշ չափով արտացոլում էր Ծոցի պատերազմից հետո եվրոպական երկրների և ԱՄՆ-ի միջև հետզհետե աճող տարաձայնությունները։ Այս հանգամանքը ԱՄՆ-ին ստիպում էր դիմելու ակտիվ գործողությունների՝ Իրանի հետ ուղղակի բանակցություններ սկսելու համար։

Հատկանշական է, որ ԱՄՆ-ը, արտաքուստ պահպանելով Իրանի նկատմամբ իր անզիջում դիրքորոշումը, իրականում բազմաթիվ փորձեր էր անում այս հարցերում վիճակի շտկման ուղղությամբ նախապայման ստեղծելու համար։

ԱՄՆ-ի դիրքորոշման որոշ մեղմացման մասին են վկայում Հաագայի միջնորդ դատարանի մի շարք որոշումները, որոնք առաջին հերթին պարտադրում էին ԱՄՆ-ին՝ վճարել դեռ շահի ժամանակից Իրանին ԱՄՆ-ի պարտքի մի մասը, իսկ մյուս դեպքում պարտադրում էին երկու ամերիկյան նավթային ընկերություններին՝ Իրանին հատուցելու նյութական կորուստները։

Նույն կոնտեքստում կարելի է դիտարկել նաև ՄԱԿ-ի որոշումը, որով իրանա-իրաքյան պատերազմում Իրաքը ճանաչվել էր ագրեսոր, և նրա վրա պարտավորություն էր դրվել Իրանին հատուցել պատերազմի ժամանակ կրած կորուստների համար։

Այս վերջին որոշումը չափազանց կարևոր նշանակություն ուներ Իրանի համար, քանի որ դրանով մի հսկայական խոչընդոտ էր վերացվում Իրանի և արաբական աշխարհի (հատկապես Ծոցի արաբական պետությունների) միջև բարիդրացիության մթնոլորտ ստեղծելու ճանապարհին։

Մինչ այդ արաբական երկրները, չնչին բացառությամբ, մեղադրում էին Իրանին՝ Իրաքի վրա նախահարձակ լինելու մեջ։

Ֆրանսիական մեկ միլիարդ դոլար պարտքի ու Ֆրանսիայում Իրանի նախկին վարչապետ Բախտիարի սպանության հետ կապված բարդություններր ևս աստիճանաբար վերացվում էին, և Ֆրանսիան, հետևելով Գերմանիային, ընդլայնում էր կապերն Իրանի հետ՝ մասնակցելով Իրանի տնտեսական զարգացման ծրագրերի իրականացմանը[9]։

Կարևոր է նշել նաև Ճապոնիայի մասնակցությունը Իրանի նավթահանման ու նավթավերամշակման արդյունաբերության վերականգնմանն ու զարգացմանը։

Իրանական կառավարությունն իր հերթին գիտակցում էր, որ Իրանի հետ կայուն կապեր ստեղծելու կարևորությունն Արևմուտքի համար ուղղակիորեն կապված է այն բանի հետ, թե Իրանը քաղաքական և տնտեսական ինչ կշիռ կունենա նոր պայմաններում՝ տարածաշրջանում և աշխարհում ուժերի նոր վերադասավորությունից հետո։

Իրանա-թուրքական հարաբերությունների ձևավորման վրա ազդեցություն ունեցան նաև մի շարք կարևորագույն տարածաշրջանային գործոններ, որոնցից առաջին հերթին կարելի է առանձնացնել իրանա-սիրիական հարաբերությունների ստրատեգիական բնույթը՝ պայմանավորված հիմնականում Լիբանանի, Պաղեստինի հիմնահարցի, Թուրքիայի, Իսրայելի և ԱՄՆ-ի, ինչպես նաև քրդերի և մի շարք այլ հարցերում համընկնող շահերով[10]։

Իրանա-իրաքյան պատերազմի ընթացքում, Սիրիան գրեթե միակ արաբական երկիրն էր, որ սերտ հարաբերություններ պահպանեց Իրանի հետ։

Սակայն ներկայացվող շրջանում իրանա-սիրիական հարաբերությունները կարելի է բնութագրել որպես պասիվ կայուն։ Բնական է, որ Իրանը շահագրգռված էր պահպանելու բարիդրացիական հարաբերությունները այդ երկրի հետ։ Այդ իմաստով նշված

պասիվությունը հիմնականում պայմանավորված էր Իրանի ներքին և արտաքին քաղաքականության մեջ իրականացվող նոր պրոցեսներով։

Երկու երկրների փոխհարաբերությունների համար կարևոր էր նաև նրանց դիրքորոշումը Ծոցի երկրների և Իրաքի հետագա ճակատագրի նկատմամբ։

Սակայն նշելով, որ Իրանի և Սիրիայի հարաբերությունները նշված արտաքին, ներքին և մի շարք այլ գործոնների հետևանքով մտնում էին նոր փուլ, և դրանց որոշակիացումն առավելապես կախված էր տարածաշրջանային կարևորագույն խնդիրների նկատմամբ այդ երկուսի դիրքորոշումից, այդուհանդերձ, Իրանի և Սիրիայի միջև սերտ կապերի պահպանումը և հետագա զարգացումը հիմնականում պիտի պայմանավորվեր Թուրքիայի տարածաշրջանային հավակնությունների դեմ ուղղված և Լիբանանի ու Պաղեստինի նկատմամբ Իրանի և Սիրիայի համաձայնեցված քաղաքական կուրսով։

ԻՐԱՆԱ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ

Իրանա-թուրքական մրցակցության կարևորագույն ասպարեզներից են մի շարք միջազգային կազմակերպություններ, որոնցում այդ երկուսը առանցքային դեր են կատարում։

Նման կազմակերպություններից ամենանշանավորը ԷԿՕ (Տնտեսական Համագործակցության Կազմակերպություն) կազմակերպությունն է, որը հիմնվել է Իրանի, Թուրքիայի և Պակիստանի մասնակցությամբ։ Այդ կազմակերպությունը կոչված էր զգալի դեր կատարել նշված պետությունների տնտեսական և արդյունաբերական զարգացման գործում[11]։

Սակայն կազմակերպության հիմնադրումից որոշ ժամանակ անց, չնայած այն հանգամանքին, որ ԷԿՕ-ն հռչակվել էր որպես զուտ տնտեսական կազմակերպություն, նրա երեք անդամներից յուրաքանչյուրը փորձեց գերիշխող դեր ստանձնել նրանում՝ քաղաքականացնելով այն և ձախողելով նախապես ընդունված տնտեսական ծրագրերի իրականացումը։

Արդյունավետ համագործակցությանը խանգարում էին նաև այդ երկրների՝ իրար չհամապատասխանող (հայտնի չափով) տնտեսական համակարգերը։

Սակայն ԽՍՀՄ-ի լուծարումից և համաշխարհային ասպարեզում ուժերի վերադասավորման հետ և ազդեցության ոլորտների համար պայքարի մի նոր փուլ սկսելուց հետո, ԷԿՕ-ի անդամ երկրների միջև սկսվեց նոր մրցավազք, որը այս անգամ ուղեկցվում էր նոր գործոնների ի հայտ գալով։

ԷԿՕ-ի շրջանակներում Իրանի, Թուրքիայի և Պակիստանի միջև ծավալվող ներկառուցվածքային պայքարին նոր երանգ հաղորդեցին անկախացած միջինասիական հանրապետությունների, Ադրբեջանի, ինչպես նաև Աֆղանստանի անդամակցությունը այդ կազմակերպությանը[12]։

Վերը նշված հանրապետությունները և Աֆղանստանը գրեթե միաժամանակ ԷԿՕ-ին անդամակցելու հայտ ներկայացրին և դարձան այդ կազմակերպության լիիրավ անդամներ[13]։

Բնական է, որ այս նոր պայմաններում Իրանը պետք է վերանայեր իր նախկին մոտեցումները ԷԿՕ-ի շրջանակներում՝ Թուրքիայի և Պակիստանի նկատմամբ։

Ստեղծված պայմանների թելադրանքով, իրանա-պակիստանյան հարաբերություններում Իրանի նախաձեռնությամբ սկսվեց լղոյի բարելավման շրջան, որը գործնական տեսք ստացավ Ռաֆսանջանիի՝ Պակիստան կատարած պաշտոնական այցելության ժամանակ[14]։

Հարաբերությունների այս էական բարելավումը ենթադրում էր երկու երկրների քաղաքական սկզբունքային նմանատիպ մոտեցումներ Աֆղանստանի, միջինասիական հանրապետությունների, Քաշմիրի, այլ կարևոր տարածաշրջանային խնդիրների, ինչպես նաև ԷԿՕ-ի քաղաքատնտեսական հեռանկարների հանդեպ։

Իրանա-պակիստանյան հարաբերությունների սերտացումը իրանա-թուրքական հարաբերություններում գերիշխող անբարենպաստ մթնոլորտի պայմաններում, Իրանի տեսակետի համաձայն, պիտի պարունակեր ինչպես տարածաշրջանային, այնպես էլ ԷԿՕ-ի շրջանակներում թուրքական հնարավորությունների և քաղաքական ազդեցության սահմանափակման պոտենցիալ։

Միմյանց հակադրվելու միտումը, որոշ վերապահումներով, ակներևաբար առկա է նաև Իրանի և Թուրքիայի եռանդուն գործունեության մեջ, որն ուղղված էր տարածաշրջանային մի շարք քաղաքատնտեսական կազմակերպությունների ստեղծմանը։

Այսպես, հիմնականում Թուրքիայի նախաձեռնությամբ Սև-ծովյան տնտեսական կազմակերպության հիմնադրմանը, որպես հակակշիռ, հետևեց Իրանի և Ռուսաստանի նախաձեռնությամբ Կասպից ծովի ավազանի երկրների տնտեսական կազմակերպության ստեղծումը, որի անդամներ դարձան, Իրանից և Ռուսաստանից բացի, նաև Ադրբեջանը, Թուրքմենստանը և Ղազախստանը[15]։

Նույն նպատակն էին հետապնդում Իրանի ջանքերը «Պարսկալեզու երկրների կազմակերպության» ստեղծման ուղղությամբ[16]։

ԻՐԱՆԱ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԻՋԻՆԱՍԻԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Միջինասիական հանրապետությունների անկախացումից անմիջապես հետո, իրանա-թուրքական մրցակցությանը Արևմուտքում իրականից ավելի մեծ նշանակություն տրվեց, քանի որ ենթադրվում էր, որ Ռուսաստանը իր ներքին վերափոխումների հետևանքով այլևս չի կարողանա պահպանել իր ազդեցությունը այդ հանրապետություններում, և թափուր գոտին անմիջապես պետք է գրավվեր այլ ուժերի կողմից, որոնք նման քայլերի համար կունենային անհրաժեշտ հնարավորություններ։

Առաջին հերթին նման հնարավորություններ ունեցող երկրներից առանձնացվեցին Իրանը և Թուրքիան[17]։

Հետագայում, միջինասիական հանրապետությունների նկատմամբ Ռուսաստանի քաղաքականության աստիճանական որոշակիացումը զգալիորեն հանդարտեցրեց Իրանի և մտնավանդ Թուրքիայի ղեկավար շրջաններում ի հայտ եկած հավակնությունները Միջին Ասիայի նկատմամբ։

Ասվածը առաջին հերթին վերաբերում է թուրքական քաղաքականությանը, քանի որ իրանական դիրքորոշումը իր դրսևորումների մեջ անհամեմատ ավելի զուսպ և հավասարակշռված էր,

մի հանգամանք, որը բխում էր Իրանի՝ արդեն ավանդական զգուշավոր և շրջահայաց քաղաքականությունից՝ Ռուսաստանի և նրա քաղաքատնտեսական շահերի ոլորտ հանդիսացող շրջանների նկատմամբ։

Միջին Ասիայում Թուրքիայի տնտեսական և քաղաքական հավակնությունները զգալիորեն կապված են ԱՄՆ-ի գործոնի հետ, ինչի շնորհիվ ավելի ակնհայտ են դառնում Իրանի անհանգստության պատճառները, քանի որ ԱՄՆ-ը Թուրքիայի միջոցով թափանցելով Իրանի հյուսիսում գտնվող երկրները, մասնավորապես Ադրբեջան և միջինասիական հանրապետություններ, հնարավորություն կստանար շրջապատել Իրանը ամերիկյան կողմնորոշում ունեցող պետություններով և ուժեղացնել ճնշումը այդ երկրի վրա։ Դեպքերի նման զարգացումը ինքնին վտանգ էր պարունակում նաև Ռուսաստանի համար։

Այստեղից բխում էր Իրանի շահագրգռությունը այդ հանրապետություններում Ռուսաստանի դերի պահպանման և նրա հետ հարաբերությունների ամրապնդման մեջ, ինչը ամերիկյան ազդեցության հակակշիռ կհանդիսանար։

Ուշագրավ է և այն, որ Թուրքիան Արևմուտքի կողմից հետևողականորեն հորջորջվում էր որպես մոդել Ադրբեջանի և միջինասիական հանրապետությունների համար։

Սակայն Արևմուտքի նմանօրինակ դիրքորոշումը, որով Թուրքիային փաստորեն թելադրվում էր արկածախնդրային քաղաքականություն Ռուսաստանի մուսուլմանաբնակ շրջաններում, միջինասիական հանրապետություններում և Ադրբեջանում, բացասական անդրադարձ ունեցավ հենց Թուրքիայի վրա։

Բնական է, որ այս քաղաքականությունը պետք է բախվեր Միջին Ասիայում և Ադրբեջանում նախ Ռուսաստանի գերիշխող և ապա՝ Իրանի շահերին։

Հասկանալի է, որ ինքը՝ Թուրքիան, գնահատելով ստեղծված իրավիճակը և հաշվի առնելով ԵՀ-ին անդամակցելու իր հեռանկարների խիստ հարցական լինելը, չափազանց շահագրգռված էր տարածաշրջանային նոր դեր ստանձնելու գործում՝ արդարացնելու համար Արևմուտքի բարեհաճ վերաբերմունքը և ապացուցելու Մերձավոր և Միջին արևելքում Արևմուտքի համար իր նոր դերի կարևորությունը։

Ադրբեջանի դեպքում, փորձելով օգտագործել ԽՍՀՄ-ի ներ-ծարումը, Թուրքիան ձգտում էր որպես ազդեցիկ լծակ շահարկել նաև այդ հանրապետությունում գերիշխող թուրքամետ քաղաքական ուղղվածությունը՝ այդ հանրապետության նավթային հարուստ ռեսուրսներին տիրանալու նպատակով։ Նրա նպատակն էր նաև այս հանգամանքը զուգահեռաբար դարձնել Իրանի ներքին իրավիճակը ապակայունացնելու միջոց, քանի որ այդ հանրապետությունում ազգայնական ծայրահեղական հավակնությունները տեսականորեն կարող էին նմանատիպ տրամադրություններ առաջացնել իրանական Ադրբեջանում։

Իրադարձությունների զարգացման նման ընթացքից խուսափելու համար Իրանը իրականացրեց մի շարք վարչատարածքային փոփոխություններ, որոնց շարքում կարելի է առանձնացնել Արևելյան Ադրբեջանի վարչատարածքային վերաբաժանումը։

Ադրբեջանի շուրջ ծավալվող իրանա-թուրքական հարաբերությունների խնդրին սերտորեն կապված էր նաև Ղարաբաղի խնդիրը, որում երկու երկրներն էլ փորձում էին ակտիվ մասնակցություն ունենալ, ընտրելով սակայն տարբեր գործելակերպ[18]։

Հարկ է նշել, որ Ղարաբաղի խնդիրը Թուրքիայի և Իրանի ներքին քաղաքական իրավիճակի վրա ուներ ոչ ադեկվատ ազդեցություն։

Չնայած այն բանին, որ ինչպես Իրանը, այնպես էլ Թուրքիան մեծ շահագրգռություն էին ցուցաբերում դարաբաղյան հակամարտության նկատմամբ և երկուսն էլ այդ կոնֆլիկտը դիտարկում էին որպես սեփական անվտանգության հետ սերտորեն կապված խնդիր, այդուհանդերձ, եթե Իրանի դեպքում ղարաբաղյան իրադարձությունները գրեթե չէին անդրադառնում այդ երկրի ներքին քաղաքական վիճակի վրա, ապա Թուրքիայի դեպքում դրանք ուղղակիորեն շիկացնում էին երկրի ներքաղաքական մթնոլորտը և թուրքական հասարակության նկատելի բևեռացման պատճառ էին դառնում։

Ղարաբաղյան հարցում Թուրքիայի բացահայտ աղրբեջանամետ դիրքորոշումը, որը, սակայն, չազդեց Ղարաբաղում հայկական ուժերի հաջողությունների վրա, հարված հասցրեց Թուրքիայի

հնգինակությանը Ադրբեջանի և միջինասիական հանրապետությունների աչքում։

Նույն հարցում Իրանի արտաքուստ չեզոք դիրքորոշումը հնարավորություն տվեց նրան, նույնիսկ անհաջող միջնորդությունից հետո, չկորցնել իր հեղինակությունը և պահպանել իր դեմքը։

Իրանը, ավելի քան հավանական է, որ, պաշտոնապես պաշտպանելով պետությունների տարածքային ամբողջականության պահպանման սկզբունքը, ի վերջո կհամակերպվեր Ղարաբաղի հայերի օգտին և Ռուսաստանի դիրքորոշմանը չհակասող որևէ նոր կարգավիճակի։

Այս դիրքորոշմանը կարելի է տալ առավել հավանական երկու բացատրություն.

1. Իրանը ընդհանուր առմամբ նախկին ԽՍՀՄ տարածքում իրականացվող սահմանային որևէ փոփոխություն ընկալում է որպես յուրահատուկ և նոր պայմաններին համապատասխանեցված, սակայն ներքին խնդիր։

2. Ռեգիոնում յուրաքանչյուր աշխարհաքաղաքական փոփոխություն, որն իր որևէ դրսևորումով ունի հակաթուրքական երանգ, ինքնաբերաբար գնահատվում է որպես Իրանին ձեռնտու երևույթ։

ԴԱՇՆԱԿԻՑՆԵՐ ԸՆՏՐԵԼՈՒ ԻՐԱՆԻ ՍԿԶԲՈՒՆՔԸ՝ ԿԱՊՎԱԾ ԻՐԱՆԱ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ

Իրանա-թուրքական հարաբերությունների նկարագիրը ամբողջական դարձնելու համար անհրաժեշտ է անդրադառնալ տարածաշրջանում հարակից երկրների շարքից առաջնային դաշնակիցներ ընտրելու Իրանի որոշակի սկզբունքին։

Նշված ժամանակահատվածում ավելի ու ավելի հետևողական և նպատակաուղղված են դառնում Իրանի ջանքերը՝ բարելավելու իր հարաբերությունները այն երկրների հետ, որոնք իրենց պատմական զարգացման ընթացքում տարբեր չափերի բարդություններ են ունեցել Թուրքիայի հետ, կամ ներկա պահին, որոշակի հանգամանքների բերումով, Իրանի կողմից դիտվում են որպես հնարավոր դաշնակիցներ՝ որոշակիորեն հակաթուրքական պոտենցիալով։

Ասվածը, բացի Ռուսաստանից և Սիրիայից, վերաբերում է նաև Հայաստանին, Հունաստանին, Կիպրոսին և որոշ չափով նաև Բուլղարիային։

Հատկանշական է, որ 1992 թ. Իրանի հետ պայմանագրեր կնքած 17 արտասահմանյան ընկերություններից 6-ը կիպրական էին[19]։

Նոր թափ ստացան նաև իրանա-հունական հարաբերությունները։ Հունաստանը աստիճանաբար դառնում է իրանական նավթի ամենախոշոր գնորդներից մեկը։

Բացի այդ Հունաստանը, Եվրոպական Ընկերակցության մյուս անդամների համաձայնությամբ, նախաձեռնող է հանդիսանում ԵՀ-ի և Իրանի միջև ակտիվ համագործակցության հետագա ընդլայնման գործում և միաժամանակ ցանկություն է հայտնում համագործակցել Իրանի հետ՝ ռեգիոնալ անվտանգության ապահովման հարցերում։

Ուշագրավ է նաև այն, որ Հունաստանը բազմիցս գոհունակություն է հայտնել Բալկանների խնդրի շուրջ Իրանի պաշտոնական տեսակետների վերաբերյալ։

ՎԵՐՋԱԲԱՆ

Եվրոպայի միավորումից հետո Թուրքիայի առջև դժվարություններ ծառացան ԵՀ-ի անդամ դառնալու խնդրում։

Սահմանափակ են նաև նրա հնարավորությունները արաբական աշխարհ թափանցելու և արաբական երկրներում իր ազդեցությունը գոնե չնչին չափով մեծացնելու հարցում։ Այդ խնդիրը բարդանում է մանավանդ Իսրայելի հետ պաշտոնական հարաբերություններ հաստատելու, ինչպես նաև Տիգրիս ու Եփրատ գետերի ջրերի օգտագործման հարցում իր անզիջում դիրքորոշման պատճառով, ինչը բացասական ռեակցիա է առաջացնում գրեթե բոլոր արաբական երկրներում։

Թուրքիայի վիճակը բարդանում է հետզհետե ծավալվող քուրդ-թուրքական պատերազմի հետևանքով, որի նկատմամբ զգայունություն են ցուցաբերում ինչպես Ռուսաստանը, Իրանը, Սիրիան, այնպես էլ ԱՄՆ-ը և արևմտաեվրոպական մի շարք երկրներ։

Այս ամենը ընթանում է Թուրքիայի ներսում քաղաքական և տնտեսական պրոբլեմների սրման հետ մեկտեղ աշխուժացող կրոնական գործոնի պայմաններում, որն իր բնույթով ապակայունացնող պոտենցիալ ունի։

Այս բոլորի հետևանքով, տարածաշրջանային դաշնակիցներ ձեռք բերելու տեսակետից, Թուրքիան հայտնվել է բավականին անբարենպաստ վիճակում։

Ինչ վերաբերում է Իրանին, ապա վարելով զգուշավոր և հավասարակշռված քաղաքականություն, առաջին հերթին շեշտը դնելով Ռուսաստանի հետ իր հարաբերությունների զարգացման վրա, նա միաժամանակ կայուն հարաբերություններ է հաստատում միջինասիական հանրապետությունների հետ՝ խուսափելով հակադրվել այդ տարածաշրջանում Ռուսաստանի շահերին։ Նման քաղաքականության շնորհիվ Իրանը մի կողմից ձեռք է բերում կարևոր լծակ Թուրքիայի հետ իր փոխհարաբերություններում, իսկ մյուս կողմից հնարավորություն է ստանում ավելի ակտիվ դեր խաղալ ինչպես միջինասիական հանրապետություններում, այնպես էլ Աֆղանստանի ճգնաժամի կարգավորման գործում, որը Իրանի համար ստրատեգիական կարևորություն ունեցող խնդիր է։

Միաժամանակ Իրանի իշխանություններին հաջողվում է երկրում պահպանել քաղաքական կայունություն և տնտեսական զարգացման անհրաժեշտ մակարդակ։

Այս ամենը ավելացնում է Իրանի կշիռը և հնարավորություն է տալիս ակտիվացնելու իր դերը տարածաշրջանային քաղաքականության ոլորտում, միաժամանակ նպաստավոր պայմաններ ստեղծելով արևմտաեվրոպական երկրների հետ հարաբերությունների բարելավման և հետագա զարգացման գործում, ինչը Իրանի համար կենսական նշանակություն ունեցող խնդիր է։

GAGIK SHALJIAN

TO THE QUESTION OF IRANIAN-TURKISH RELATIONS AND THEIR PECULIARITIES IN THE MIDDLE EASTERN REGION

The development of Iranian-Turkish relations can be characterized by their changable nature. There were cases

when seemingly balanced relations were changed into openly hostile ones.

Among the significant political factors of regional and world importance which have great influence on the formation and development of these relations can be firstly emphasized the Gulf war, the collapse of the USSR, then the expanding of Iranian-Russian relations, the alliance between Turkey and the USA, Iran and Turkey contradictory attitude in the question concerning Israel and Palestine.

In the formation of Iranian-Turkish relations great is the influence of the Arab countries, especially the position of Syria, Iraq, the Arab monarchies of the Gulf.

The role of the Western countries in the Iranian foreign policy and Iranian-Turkish relations is also refleted in the mentioned paper.

The competition between these two countries to gain a dominating role in Central Asia, Trans caucasus and Karabakh problem as well as their atiitude towards establishment of different regional organizations in particular ECO. The Black Sea Cooperation Organization, The Caspian sea littoral states organization, is also touched in the presented work.

In the last part of the paper an attempt is made to summerize the tendencies of development of these two countries relations and defining the weight of Iran and Turkey in the region by drawing parallels between the regional policies of Iran and Turkey.

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1 *«Արարատ», 25. 06. 1992։*
2 „The Iranian Journal of International Affairs", 1991, № 4.
3 „The Iranian Journal of International Affairs", 1991, № 1.
4 „The Iranian Journal of International Affairs", 1991, № 4.
5 *«Ջումհուրիի էսլամի», 05. 10. 1991 թ.*; „Tehran Times", 04. 03. 1992.
6 «Вестник», 20. 11. 1991 г., Вестник, 04. 12. 1991 г.
7 *«Ջումհուրիի էսլամի», 03. 06. 1992։*
8 «Вестник», 28. 03. 1992 г.
9 „Le Monde", 15. 08. 1991. *«Ջումհուրիի էսլամի», 30. 12. 1991։*

10 „The Iranian Journal of International Affairs", 1990, № 1. № 3. „Kayhan International", 19. 09. 1991. *«ազգ-Դիյաբ», 02. 06. 1992, «ալ-Բաաս» 21. 01. 1992, «ալ-Խալիջ», 11. 10. 1992։* .

11 *«էթթելլաաթ», 18. 02. 1992։*

12 „Tehran Times". 11. 02. 1992.

13 *«էթթելլաաթ», 07. 02. 1992,* „Tehran Times". 09. 02. 1992.

14 „The Iranian Journal of International Affairs". 1992. № 3—4.

15 «Вестник», 19. 02. 1992.

16 «Вестник», 20. 02. 1992.

17 *«աս Յաֆիր», 18. 02. 1992,* Tehran Times, 25. 01. 1992; Tehran Times, 05. 02. 1992.

18 *«էթթելլաաթ», 20. 03. 1992։* „Tehran Times", 25. 01. 1992; „Tehran Times", 05. 02. 1992.

19 „MEED", *հունիս, 1992։*